

Ա. Յ. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ԺԶ—ԺԷ ԴՊ. ՄՈՌԱՑՎԱԾ ԲԱՆԱՍԵՂԸ ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5623 ձեռագրում, ի շարս բազմաթիվ տաղերի, պահպանվում են ևս երկու տաղեր, որոնք անտիպ են, և որոնց հեղինակն իրեն կոչում է Գրիգոր Վանեցի: Անա այդ տաղերի անփոփ նկարագրությունը.

ա) Տեր Գրիգոր Վանեցի ասացեալ խրատ նոգեոր և առակատը վասն սայի

Յոյժ տարակուսալ էի,
Դեգերեալ յիմու մտի...
Գերի Գրիգոր Վանեցի... (թերթ 140թ—
147թ):

բ) Նորին Գրիգորիսի իմաստուն քահանայի ասացեալալ

Է իմ արարիչ Աստուած,
Զմարդ պահէ, որ չի դալատի...
Գերի Գրիգոր Վանեցի... (թերթ 147թ—
150ա):

Այս տաղերի այլ ընդօրինակություն մեզ հայտնի չէ: Ինչպես տեսնում ենք տաղերի խրագրերից և տողերում առկա տվյալներից, հեղինակն իրեն կոչել է Գրիգոր Վանեցի (անվանվել է նաև Գրիգորիս): Ուշագրավ է գրչի գնահատականը՝ «իմաստուն քահանայ». տաղերի խոհա-խրատական բնույթը, իրոք, կարող էր հիմք տալ համա գնահատականի:

Չեղագիրը, որի մեջ պահպանված են նշված տաղերը, ընդօրինակված է 1649—1653 թվականներին: Քանի որ դա հեղինակային ինքնագիր չէ, ուստի հեղինակը պիտի ապրած լինի այդ թվականներից առաջ: Տաղերում առկա գրչական սիմազներն ու շփոթությունները (տե՛ս տպագրվող բնագրերի տողատակերում) ենթադրել են

տալիս, որ նախագաղափարը կարող էր ունենալ առևվազն 50—100 տարվա հնություն: Ուստի Գրիգոր Վանեցու ապրած ժամանակը կարելի է որոնել ԺԶ կամ ԺԶ—ԺԷ դարերում:

Չեղագրերում, ձեռագրացուցակներում և տպագիր աղբյուրներում հանդիպող համանուն վանեցիների (նաև վարագեցիների) թիվը մեծ է, բայց մենք առաջմ դժվարանում ենք մեր հեղինակին նոյնացնել նրանցից որևէ մեկի նետ: Այսպէս, օրինակ, Երոսաղեմում պահվող № 1456 ձեռագրում հիշված է Գրիգոր Վանեցի անունով մի բանատեղծ, որի նետ մեր հեղինակը չի կարող նոյնացվել, որովհետև առաջին տողերից երկուսը գրված են 1691 թվականին¹: Լեռնահայոթյան նոգեոր առաջնորդ Գրիգոր Վանեցու-Վարագեցու նետ (մենած 1574 թ.) Էլ առաջմ դժվար է նրան նոյնացնել, որովհետև հավաստի փաստեր չունեն: Նոյնը կարելի է ասել նաև մըս Գրիգորների մասին:

Գրիգոր Վանեցին իր երկու տաղի մեջ էլ շարադրում է նոգեոր խրատներ՝ երակեան ունենալով հոգու և մարմնի հարաբերության հարցը: Այս առուսով նրա տաղերն առանձին նորություն չեն թերում: Ուշագրավ է, ասկայն, որ հեղինակը երկու տաղի մեջ էլ մեծապես օգտվել է հայրենների հարրուտորյունից՝ տալով նրանց ժողովրդական մոածողության ու աշխարհբնմբնան երանցներ: Ստեղծագործությունները շահել են հատկապես ժամանակի խոսակցական լեզվից և երկրային ու առօրյա իրողություններից օգտվելու շնորհիվ: Այս առու-

¹ Ե. Խաչ. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբություններում, Ե, ձև. № 1456, թերթ 241ա—247ա, 248ա, 251ա—252ա:

մով բացատկի արժեք ունի առաջին տաղը, մանավանդ որ այստեղ հեղինակը Գրիգոր Նարեկացու մետու, առաջին և վերջին անգամ մեր միջնադարյան պոեզիայում, տախի է ասլի գովք-նկարագրություն։ Նրա ուղղակի նպատակը, սակայն, դա չէ, այլ այն, որ այդ եղանակով կարողանա ամենի տեսանելի, շոշափելի, նպատակալաց դարձնել հոգու և մարմնի փոխարարելության վերացալան թեման։ Բանաստեղծության մկրքի մասում հեղինակը խոսում է հոգու կրած հաղածանքների մասին, բուժ նրա արտունչը և ասում.

Ի յայտ խորհրդեանդ յերակ
Միշտ վիճէր հոգիս ընդ մարմնի.
Յատոր միում շրջէի,
Լսեցի զձան մի սալի:

Սալն էլ իր հերթին է ճոճալով արտընչում.

Երկինք էինք մեր յերկրի,
Առանիկ անկեալ ի գետնի.
Ցերեկն ի միմիանց տաճչեալ,
Մաշելով փայտերն մի ըզմի...

Սալը պատմում է, թե ինչպես ինքն առաջ շրեգերին տնկված մի դպար ծառ էր, որին երգով ու պարով այցելում էին յօնչուններն ու գելիյունները, իսկ սովորում, ծաղկավետ դպարի վրա, հնչում էր երիտասարդների երգն ու նվագը։ Լինելով այդպես փարթամ ու վեճ, նա իրեն խագալոր է կարծել՝ արհամարհելով կարվու և գետին տապալվու ծառերին։ Եվ անա հենց այդ հպարտանալու պատճառով նա պատրժվում է, ցեցոտվում, տերևազրկվում և մի օր էլ, կտրվելով, օգտագործվում սալի (ու նավի) համար։ Այնունեալու սալը նկարագրում է իր ծանր վիճակը և խոսում այն մասին, թե ինչպես շուտով մի կողմ է նետվելու որպես անպետք փայտ՝ մատնելով իրկիզման ու մոխրացման։

Պետք է բարձր գնահատել բանաստեղծի շնորհը՝ այս ամբողջ զրոյցն այնքան կենդանի ու անմիջական վերարտադրելու սուսում։ Հիրավի, դա մի գողոտրիկ տալ է ծառի ու սալի այնքան վշտալի մենախոսքամբ և հեղինակի համապատասխան խոներով ու դատողություններով։ Հիշենք մի բանի տող, ուր ծառը նկարագրում է տապարագորի գալը և իր վիճակը՝ կտրվելով պահին։

Իսկ մի ոմն ի նոցանէ
Որ ունէր տապար ի ձեռին,
Հատեալ լի ստեղնէ իմնէ
Եւ արար բազուկ տապարին.

Եհար բարկութեամբ յարմատս,
Եւ ճրդերս ամէն դրդային։
Տերևս իմ ի լաց եղեալ,
Հաւասար աղաղակէին։
Ասին, թէ՛ Մի՛ հատաներ,
Ալլի տամբ զպտող ի ժամին՝
Կըրկնաշահ և բազմաբեր,
Գերագուն քան ըզյառաջին...

Այս տաղն իր գեղարվեստական մշակման եղանակով մեզ նիշեցնում է մի կողմից Ֆրիկի կատարած մշակումը՝ «Հովասափ և Բարադամ» պոեմի դրվագներից, իսկ մրու կողմից՝ Սադալա Պուեցուն և Ֆրիկին վերագրված «Բանք երկու եղրօն...» մեծարժեք ստեղծագործությունը։ Գրական նման անակնելապները յորովի էին բացում գրականության դուները՝ առակալի խոսքի, ծողովրդական առօրյափ և կենցաղի առջև։ Որքան էլ որ գործ ունենք այլաբանության նետ, դարձյալ չենք կարող յնոյ նշականել, որ նշաված ստեղծագործությունների մեջ շոշափված իրերն ու առարկաները, էակներն ու տեսարանները զուտ բնական, աշխարհային հակասություններ են։ Վերհիշենք «Բանք երկու եղրօն...» բանաստեղծության մեջ անձնավորված կրմների օրինակը, որին բանաստեղծը խոսեցնում է մարդկային լեզվով և այդ եղանակով վերարտադրում նրա ստեղծման, օգտագործման ու բայրարհման պատմությունը։ Այստեղ կոմինորը, ինչպես նաև նրա համար օգտագործված կավը զուտ բնական, իրական, առարկայական հասկացություններ են։ Նոյնը պիոնի առել նաև Գրիգոր Վանեցու մկրտագրած և անձնավորած ծառի ու սալի մասին։ Նա ևս նկատի ունի բնական ծառը, նրան շրջապատող իրավան ընտրումնը, իրական սալը և նրա խկական նուշոցը։ Այլ բան է, երբ բանաստեղծն այդ բորբի օգնությամբ փորձում է խոսել հոգու և մարմնի վերացական վիճարանության մասին՝ ըստ իր կրոնական պատկերացումների։ Անկախ դրանից, այս և առնասարակ նման ստեղծագործությունները մեծապես նպաստում էին պոեզիայի աշխարհականացման ընթացքին։

Ասացինք, որ Գրիգոր Վանեցու ընկերությունը Գրիգոր Նարեկացու «Սալը իշա-

² Նման ստեղծագործության ուշագրավ նմուշ է նաև Վրթանեւ Կաֆացու նայտնի տաղը՝ նվիրված ձեռագիր ծողովածովի օգտագործմանը։ Խսկ Վրթանեւը եղել է լնամապուրամ առաջնորդ Գրիգոր Վանեցու-Վարագեցու մտերիմը։ Դա էլ իր մերժին է մտածել տախի մեր նեղինակի և Գրիգոր Վանեցու նոյնացման ննարավորության մասին։

նէին» տաղից հետո սպաշին և վերջին նմուշն է սայի թեմայով: Ուստի անբարկի չեր լինի այդ կապակցությամբ առել հետևյալը: Որոշ մասնագետներ, անդրադառնայով Գրիգոր Նարեկացու տաղին, գտնում են, որ այնուղիւ գովերգված է երկրաշին, իրական սայի երկրաշին խոտարութերի խրձերով, երկրաշին եզերով և անգամ երկրաշին մարդկանցով: Դա ճիշտ չէ:

Եթէ Գրիգոր Վանեցին իր նկարագրած սայի հանդիպում է փողոցում և նկարագրում նրա ծառային ծագումն ու փայտեղին կառուցվածքը, ապա Գրիգոր Նարեկացին խոտում է վերացական սայի մասին, որը իշնում է Մասի գագաթից, ոմին գերբնական եզերը, շարժվում է կախարդական խոտարությամբ խրձերով և կրում է Աստծու Որդուն ու հրեշտակապետների: Սայլապանն էլ ոչ այլ որ է, քան Հովհաննես Մկրտիչը: Մասնագետներին ցարդ չի հաջողվել պարզել այն հախահիմքը, որ հրաշակերտութիւն է Գրիգոր Նարեկացու գրչի տակ: Որոնումները ցույց են տալիս, որ այսուղի գործ ունենք սպառածաշնչային և սպասպերական սայի գաղափարի հետ: Մեզ այս հարցում օգնում է ինքը բանաստեղծը՝ աւելով.

Սային-ի Սինեայ՝

Երկրորդ օրենքն է Մովսէսի...

Այսինքն, Սինայից (փոխաբերաբար՝ Սասից) իշնող սայը Մովսէսի Երկրորդ օրենքն է: Հիրավի, Սասովածաշնչում առկա է համան հիմք: Ցայտուն է, օրինակ, Մովսէսի Հնգամատյանի վերջին գրքի՝ Երկրորդ օրենքի այն վկայությունը, որի համաձայն Աստված Սինա լեռան վրա Մովսէս Մարգարեին պատվիրում է աւափուս փայտից պատրաստել տապանակ, զետեղել այսուղի իր պարգևած օրենք-պատվամները և այն տեղափոխել Սինայից Երուսաղեմ: Առա այդ տապանակն է, որ հասուղի սայի վրա դրված տեղափոխվում է Երուսաղեմ: Նրա նկարագրությունն ու պատմությունն սկսվում է Կարիաթարիմ քաղաքից: «Եւ ժողովեաց միւս անգամ Դասիթ զամենայն երիտասարդս լիսրայելէ իրեն եօրասաւուս հազար և յարեան գնաց... ի զադիւնքն որ երա տապանակն Աստուծոյ, յորոց վերայ կոչեցա անոն Տեառն Աստուծոյ զօրոյթեանց, որ նատի ի քրովիքս ի վերայ նորա: Եւ ենան եղ զտապանակն ի վերայ սայի նորոյ, և առ նա ի տանէ Ամինադարայ Բլրացոյ. և Ոզա և եղբայրը նորա վարեին զայլն հանդերձ տապանաւն... Եւ որդիքն Խորակի խաղային սպաշի Տեառն տաղօր և նուգարանօր, զորութեամբ և երգօլք և բնարօր և որնօլք և

թմբկօր և ծնծղախիք և փողովք» (Թագաւորք Բ, Զ 1—17):

Ինչպէս տեսնում ենք, այստեղ տրված է ոչ միայն սայի, այլև նրա վրա գտնվող Աստուծոյ զորոյթյան, քերովեների, առջևից պարով և նվազարանեներով ընթացող խրացեցի երիտասարդների («մասնակաց») նկարագրությունը, միշտ այնպէս, ինչպէս Գրիգոր Նարեկացու տաղում:

Հնունելով մահրախանությունների մեջ, առենք միայն, որ ցարդ այս նիմիթի նկարված չկննեն պատճառով մասնագետները տարբեր կարծիքներ են հայտնել՝ բոլորն եւ վերանայելի:

Այսայսում համոզվում ենք, որ Գրիգոր Նարեկացու նկատի առած սայը ոչ քե իրական, երկրաշին սայ է, այլ գերբնական, աստվածաշնչային՝ բարձված Երկրորդ օրենքի վերացական սրբություններով: Ուստի, անդրադառնալով Գրիգոր Վանեցու նկարագրած սային, կարող ենք ասել, որ նրա նկատի տեսեցած սայը, իբրոք, երկրաշին սայ է և իր բնույթով նոր ու թարմ թեմա մեր միջնադարյան պոեզիայում:

Հայ Էության այդ երկու ստեղծագործությունների միջև կամ նաև այլ տարբերություններ՝ պայմանավորված նրանց ներինակների հետապնդած նպատակներով: Օրինակ, Գրիգոր Նարեկացու մոտ հշխում է տոնական հանդիսավորությունը, ցնծությունը և սայի հայրական երթի գովքը, մինչեղան Գրիգոր Վանեցու տաղը ոչ այլ ինչ է, քան ողբ նախ նոգոյ թերանից, ապա սայի: Այնուհետև առաջինը ներբողական է, իսկ երկրորդը՝ խոհա-խրատական, հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն գիտական առումով:

Սոորոք զետեղում ենք Գրիգոր Վանեցու վերոնիշչայլ տաղերը՝ նույնությամբ. միայն առանձին դեպքերում կատարել ենք մասնակի շակումներ՝ համապատասխան նշումներով: Տողասումը և կետադրությունը մերն է: Միօրինակության նպատակով «առ»-երը փոխարինում ենք «օ»-ով:

³ Հարկ ենք համարում նշել, որ Գրիգոր Նարեկացու տաղի բնական բնագիրը կազմված և բարձրանությունը կատարելիս մենք կամկատ ենք մինունել վերևում շարադրված մեր մկնարանությունը, բայց առի չենք ունեցել համապատասխան մասնականություններին անդրադառնազ տպագիր խորթը: Հավանաբար նաև այդ է պատճառը, որ բանահրական գիտությունների դոկտոր Գ. Արգարյանը միշտ չի վարվել՝ այդ հարցում մեզ սիսակ համարելու ու խնդրի մեջ «ճշգրտում» մոցնելու փորձով (Տե՛ս «Եշմիածին», 1974, Ա. և Բ. համարներում գլուխության նոր նորմանաշարը): Ցավոր արդիւ տուրա են որից վրիպակներ են:

1. Տեր ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ ԽՐԱՏ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՌԱԿԱՆՈՐ ՎԱՍՆ
ՍԱՅԻՆ

Յոյժ տարեկուսեալ էի,
Դեգերեալ ի յիմում սրտի,
Զի միշտ ի ներուստ հոգիս
Բողոքը ի դրուսն մտի:
Որպէս որ Փրկիչն ասաց
Զառակս ի պէտս խըրատի,
Զարի կինը բաղարին,
Զի ընդ ոսխն ի դատ մտանի:
Այրին յոտիւն կողին՝
Կողկողէ նայ ոյժ լալագին.
Դատարոն այն անիրաւ
Դատար արդար չառնէ ընդ ոսխն:
Նոյնակս յինում բաղարի
Դեգերեալ իմ այրի հոգիս,
Յոտիւն մարմնոյ զրկեալ,
Կինդանոյն մեռեալ գոյ ի յիս:
Հոգիս իմ առ իս ասէր,
Թ՛ Այլ չկայ քան ըգիս գերի,
Ի բարձր փառաց զրկած,
Կորուսած⁴ զինչ որ ունի:
Կարծեմ թ'ան բռչունյն նմանին.
Որ նստի ի յեզեր ջրի,
Տրոտմ կայ, չիշխէ ըմպել,
Կոյ վախի, թէ ջորին պակասի:
Կամ թէ մեծամեծ ձկանց,
Որ լինի մէջ անքաւ ջրի,
Ի ձեռն որտորդի գործեն,
Ի ջրէն արտաքս⁵ ընկեսցի:
Ի յալու խորհրդեանդ յերակ
Սիշտ վիճէր հոգիս ընդ մարմնի.
Յատոր միում շրջէի,
Լսեցի զայն մի սայի:
Անին ճըտող ճըշէր,
Ողբերգեր ջամբն ընդ առեղին.
«Երկինք էինք մեր յերկին,
Սամիկ անկեալ ի գետնի:
Ցերեկն ի միմեանց տաճչաւ,
Սաշելով փայտերն մի ըզմի,
Գիշերն անպիտան անկած
Ի յեզեր մի նանապարիի»:
Ասեմ ես առ իմ հոգին,
Թէ՝ Գըտար ըզքո նմանին.
Մերձ կացիր, հարցիր ըզնայ,
Օգտեսցես դու դեղ բռ վիրին:
Ասեմ. Այ սայը, Է՞ր գոչես
Ողբածան ընդ մարգարէին՝
Երեմիայի մեծին՝
Ողբերգող ի տան Խարայելին:
Դարձաւ, պատասխան ետոր,
Թէ՝ Կացի՛ր, Աղամայ որդի,
Զառաշին փառս իմ պատմեմ,

Տե՛ս թ՛ որպէս եմ ողորմելի:
Ես ծառ գեղեցիկ էի,
Զիս տընկած յեզերն ի շըրի,
Բազում ժամանակ գոլով,
Հաստատեալ զարմատս ի գետնի:
Զորք մանուայծաւ ալեօք
Ընդ աշմէ իմ անցանէին,
Նօօօֆար բուտեալ ի նմայ,
Եւ եկալ յերեսը շըրին:
Մըրերս խուզըն տերևով
Հոյ առեալ իմոյ այտակի,
Տերևս ի նողմոյ շարժեալ
Գեղեցիկ ձայնս արձակէին:
Թոշունք գեղեցիկ փետրով
Եկեալ իմ յատըն հանգչէին,
Ի յառաօտո պահուն
Գեղեցիկ ձայնս արձակէին:
Մանկունք գեղեցիկ՝ եկեալ,
Ընդ հովով իմով նատէին,
Ուտէին և ըմպէին,
Օրինէին զարքայն երկնային:
Թըմբուկ և քընար առեալ
Երգէին ընդ երգէնոնին,
Վաղորդնէ⁶ մինչ յերեկոյ
Յայնայիս փառը ցնծային:
Յաշմէ և ամեկէ տնկած
Բուրաստան, և վարդն ի միջին,
Համասին և բրաբին
Ի այլ ծաղկունք ընդ մանուշակին:
Ի յառաօտո պահուն
Յօնն իշեալ ի բուրաստանին,
Ծաղկանցն ամեն զարդ առեալ
Եւ զանուշ հոտըն բուրէին:
Արմաւենի, խնձորի
Ի այլ ծառերըն պտղով ի լի
Ծորչանակի պար առեալ,
Ի եւ թագուր ի մէջ ամենի:
Զայլ ծառըն հատեալ տեսի
Եւ նորայ ինձ ծաղր թըւէին.
Մի ոնս ի հատեալ ծառոցն
Մատոցեալ ինձ քան մի⁷ գումի:
Թէ հազար տարի կենաս,
Զես հասներ ի յօդաըն վերին,
Աւորք⁸ մի տի բարձրանաս.
Ցերք— որ է՝ ո՞ ընգնիս ի գետնի:
Ի յիմ փառս հրապարտացայ,
Զի շրնչեաց ին հողմըն⁹ շարին.
Ասեմ ես յիմում մըտին,
Թէ պարձանք եմ ես ամենի:
Խըրատ մի քեզ տալ կամիմ,

⁴ Զեռագրում մտան. ողդում ենք ըստ նանգավորման:

⁵ Զեռագրում Կորուսած:

⁶ Զեռագրում արտակար:

⁷ Զեռագրում երկնային:

⁸ Զեռագրում Վաղորդն:

⁹ Զեռագրում «քան մի» դարձվածքը կրկնված է:

¹⁰ Զեռագրում Աւորք:

¹¹ Զեռագրում նողըն:

Թէ լրսես, ով դու նողածին.
Մի՛ սիրեր զհապարտոթիւն,
Զի նայ թիւնք է մահաբերին:
Հապարտոթիւն օրինակ—
Նմանակ է այն չար օճին,
Զինչ կենածի խալծանէ՝
Նայ թըմբրեալ անուշ կու քընի:
Չպահիկ մի ի քուն լինել
Յայն ժամոն փոխով մեռանին.
Մի՛ սիրեր զհապարտոթիւն,
Թէ կամիս զկենքըդ րու անձին:
Տե՛ս, թէ ինչ արար հապարտոթիւն,
Որ զիս նաղր արար ամենին.
Ըցեցն ի անձնեւս ենան,
Զիս առաջ արար հապարին:
Եւ գարնանային ժմին,
Որ ամէն ծառեր ծաղկեին,
Կանաչին վայելուշ՝¹² գունով,
Ես ծաղկեալ ի մէջ¹³ ամենի:
Յարմատոյս ինձ որդ ծընա,
Ցեղ եղև նայ իմոյ անձին.
Շաղիկն ի թափել էսա,
Եւ տերեւը թառամէին:
Յատոր մի՛ վեր արը եկին
Դի հոնքրս ի վեր նայէին,
Սսեն, թէ՛ Պտուղ չունի,
Կորելոյ է անհրենարին:
Խոկ մի ոնն ի նոցանէ,
Որ ուներ տապար ի ձեռին,
Հատեալ ի ստեղնէ ինմէ:
Եւ արար բազով տապարին:
Ենար բարկութեամբ յարմատոս՝¹⁴
Եւ ճրդերս ամէն դողային.
Տերևս իմ ի լաց եղեալ,
Հասասար աղաղակէին:
Սսեն, թէ՛ Մի՛ հատաներ,
Սյրի տամբ զպոտով ի ժամին՝
Կըրկնաշան և բազմաբեր,
Գերազոն քան զզյառացին:
Ենես պատահաւ շետոր,
Զի հրաման էր յոյժ սաստկայգին,
Լացին շատ զիրեանց արևն,
Վայ տոփին հասար ամէնին:
Մինչ հիմայ¹⁵ թագաւոր էաք
Եւ բազմեալ ի բարձրագանին¹⁶,
Անա հըրաման ենաս՝
Յարոռու իջնուլ ի գետին:
Ենաս և ընկէց լերկիր
Հայ հրամանի Փրկչին Յիսուսի,
Թէ՛ որ պատող բարի չառնէ,
Զնայ հատեալ ի հորս ընկեսցի:
Զճրդերս իմ մի՛-մի հատեալ

Բազմայինատ իբրև զԱկովկին,
Հատեալ զգիսոյ ձիոն լինէն,
Նմանեալ մեծի Մկրտչին:
Գնացեալ և վարպետ թըրին,
Խիզուեցին որպէս զԵսային.
Համեալ զմորթին լինէն,
Նմանեալ Բարդուղիմէին:
Եւ յերկուս բաժանեցին,
Զիս կոպուեալ անի ձևեցին,
Եւ զայն, որ լինէն հատին
Ողբափար ասեն զնայ նախին:
Եկեալ զնայ ի բարշ տարան
Նմանեալ ի դէսն աղանին¹⁷,
Տարեալ, նաև ողովուցին,
Ընկեցին ի մէջն ի ծովին:
Խոկ նայ, ի ծովու յալխան,
Երերայ միշտ անդիրելին,
Յատոր մի վիմի հարեալ
Եւ տախտակըն մէկմէկասցին¹⁸:
Ես աստ ցամաքով տանջեալ
Հողովմամբ¹⁹ միշտ անդիրելի,
Օր մի ընկըրդի ի գորքն
Ընդ բանին իմաստաերի:
Եւ յան խորտակման մերոյ՝
Զմեա ճարակ առնեն կրակին,
Այրեն և փոշի առնեն,
Յատոյ տան զփոշին ի բամին:
Լաւ մտօր քննեալ զզիս
Եւ արայ թաղրիր քեզ, գերի.
Կենցաղոյ մի՛ հասատար,
Շաս խարեր, կրկին տի²⁰ խարի:
Սսեն, թէ՛ Հերիք արայ,
Բառական է այս լսովին,
Դու նման նախաստղին:
Որ կրոյս զփասու առաջին:
Հատեալ խարանօր օճին
Եւ անկան իր ճիղըն ի գետին.
Եւ ծըրնդենէ նոյունալ,
Մինչև ենաս գոր գերեզմանին:
Այլ ես ես ի նաև նման՝
Մըփաղով ի մեղաց ծովին.
Վաղորդեն մինչ յերիկուն
Հետեալ եմ կամաց չարին:
Հողմով կենցաղոյ վարեալ,
Մօսացեր եմ ես եղերին.
Եւ վեմըն մահու հարեալ
Եւ զօդուածու իմ մէկմէկասցին:
Ամէն արարածք, լացէր
Զեղկելի ծառայս Արարչին.
Զիս արեամբ զբնեաց Փրկիչն,
Իմ կամա գերեցայ²¹ չարին:
17 Հավանաբար աղաղաղիած են վերջին երկու բառերը: Կարելի է կարդալ նաև «ի դէսն աղանին»:
18 Զնապերում՝ մէկմէկասցի:
19 Զնապերում՝ նոյովմանմբ:
20 Զնապերում՝ չի:
21 Զնապերում՝ զերցայ:

Զիս ալքի ցանկով պատեաց
Զողաբարձ և պտղով ի լի,
Զցանկըն քակեաց թշնամին,
Եւ եղէ կոհան ամենի:
Զիս քաղաք ամուր շինեաց,
Պարբռապեաց վինօր հրաշալին,
Թշնամին քակեաց ըզորմը²²
Եւ գերեաց զիմ այի հոգին:
Գերի Գրիգոր Վանեցի,
Դու գետին կացիր ամենի.
Զերեսան ճանապարհ արայ,
Որ ամէն մարդ ըզնայ կոյսի:
Գոյացեալն ի չորս տարրէ
Ի հողոյ ՚ ի ջըռոյ կու յագէ:

2. ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԻՄԱՍՏՈՒՆ
Է իմ արարիշ Աստուած,
Զմարդ պամիէ, որ չի յալատի.
Լուսով զնայ պարայծածկեալ,
Որ խաւար տեղ չի մոլորի:
Մարմնով զնա անադու պահեալ,
Որ մեղօք չի ապականի.
Զերկուող քո ի միտն ձգեալ,
Որ յետնումըն չի շիարի:
Խըրատ՝ սայ քրիստոնէից,
Որ ծընունդ է աւազանի.
Ի ջըռոյ ՚ ի հողոյ ծընեալ
Եւ որդի լուսոյ անուանի:
Զիրկական խորհուրդն առեալ
Եւ եղեալ տաճար տէրունի.
Մարմնաւոր հրեշտակ է նայ
Եւ տեղի Բանին կենանի:
Զիր մարմին լըստուկ պամիէ
Ի յաղտոյ յայսմ կենցաղի.
Հոգովըն մաքուր կենայ,
Քրիստոսի հետոյն հետոնի:
Խորհրդեամբ յերակ մաշէ
Եւ յիշէ զօր հոգէվարի.
Թէ որպէս լերէկ էանց,
Սինչ ի մաս այնակս անցանի:
Որպէս հրամայէ Փրկիշն՝
Մարդ յերակ պատրաստ կու
պիտի.

Ժամանակն անցնի, գընայ,
Մարդ մեղօք անհոգ կու քընի:
Թէ զինչ մարդ որ միտք ունի²³
Երկիրի նա միշտ զարհուրի.
Քննեայ և դու միտ արայ
Թէ քո կեանքդ յինչ կու նմանի:
Քո հոգիս ի քո մարմինն
Տուրուառ շընչով կայկայի.
Մտնու և չելանէ,
Զով բերես, որ ըզնա հանէ:
Թէ եղեալ ոչ մըտանէ,
Հետացեալ ի յօդն ցընդի.

Խոկ հողն ընդ խոնարին գոլով
Եւ եղեալ կոխան ամենի:
Եթէ զջորն ի վեր ուղղես,
Նայ չերթայ իսկի բընապին.
Ի վերուատ ի վայր հունալ
Եւ խոնարին տեղիս դադարին:
Այդ քեզ օրինակ առեալ
Եւ կողկող խըրատըն սային.
Ամենեցոն հող կացիր,
Փառս երգեաց միշտ Երկնատրին:
Փա՛ռ քեզ, արարիշ Աստուած,
Որ ատեղծի ես ամէն գոյի,
Յերակ խըրատն ըզմեզ
Եւ գրթաս որպէս հայր՝ որդի:

ՔԱՀԱՆԱՅԻ ԱՍՍԹԵՂԱՅԻ
Բայց լՍատուծոյ ո՞վ կարէ,
Թէ ի տեղն իր անդրադարձէ:
Կրկին հրամայէ Փրկիշն,
Թ՞օր մահոն ի գող նմանի.
Մէջ գիշերի կեցաղոյն
Նայ յանկարծ ի տան երկի:
Տե՛ս, զի անցաւոր ես դու,
Մուհիարով քո կեանքդ ի յերերէ.
Չունիս կենալոյ ճարակ,
Կամ մնալ ի յայս աշխարհի:
Մարմն զօրաւոր կու գայ,
Զքո ամէն թադրիր կու քակի.
Թէ ծեր ես կամ թէ տրդայ,
Թէ իշխան բընա աշխարհի:
Զարշխարհն ամէն մովք ունիս
Եւ թագուր լինիս ամենի,
Յիշեալ դատաստան կայ քեզ
Եւ կոչել՝ ըզքեզ յատենի:
Ամեն և սաստիկ հրաման
Եւ տագնապ յոյժ սարափելի,
Դատաւորն արդարադատ
Անաշառ ընդէմ ամենի:
Ի միտ ած ՚ յիշէ ըզփառ
Արդարոցն յայնմ յախտենի.
Եւ տանջան մեղատրացն,
Որ տանջեն ի տարտարոսի:
Այս ամէն առաջի կայ,
Արտասուրդ ոնց կու ցամաքի.
Զարթիր դու ի քնոյ մեղաց
Եւ արայ թադրիր քեզ, գերի:
Զաշերտ արտասուրդ դու լից,
Կաթեցոյ դէմ Երկնատրին.
Միթէ ողորմած լինի,
Զքո մեղաց մուրիակըն ջընչէ:
Գերի Գրիգոր Վանեցի,
Վայ ասայ միշտ անդրդուելի.
Տե՛ս, թէ քանի վերը ունիս
Ի հոգիս քո անթուելի:
Ալլոց դու խըրատ կու տաս,
Քեզ անչափ խըրատ կու պիտի.
Ալլոց կասես զշիդըս հան,
Քո աշերտ գերան ունի:

²² Զուագրում զոր ըզորմ:

²³ Նախ՝ «թէ զինչ մարդ ու մարդ». Վերջին բանը չնշված և լրացված՝ «որ միտք ունի»-ով: